ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 2, 23.04.2025թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 22.04.2025թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-11/01L**) Ծաղկաձոր մասնաճյուղի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-11/01L
Դաս: ԾԳ
«22» ապրիլի 2025թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԾԱՂԿԱԾՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև անհրաժեշտություն է առաջացել ընդլայնել Բանկի Ծաղկաձոր մասնաճյուղի տարածքը և գործունեությունն իրականացնել նաև նոր վարձակալված տարածքում՝ Բանկի Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Բանկի Խորհրդի 2007 թվականի օգոստոսի 17-ի թիվ 19/2 որոշմամբ հաստատված Ծաղկաձոր մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել Բանկի Գործադիր տնօրեն Միհր Անանյանին ապահովել Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Ծաղկաձոր ք. Գ.Մագիստրոսի փողոց 13 շենք, 5 ոչ բնակելի տարածք և Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Ծաղկաձոր ք. Գ.Մագիստրոսի փողոց 13 շենք, 1 հասցեներում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում Բանկի Ծաղկաձոր մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահի ժ/պ՝ **Ա. Սուվարյան**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • АРАРАТБАНК ОАО
02500518